Հաստատում եմ՝

ԵՊՀ պրոռեկտոր

Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Շավարշ Խաչիկի Ազատյանի՝ «V-VIII դարերի հայ սրբախոսական գրականության պատմագիտական արժեքը» Է.00.05 «պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի 2021 թ. դեկտեմբերի 6 – ի նիստում (արձանագրություն թիվ 5) նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Ա. Ա. Ներսիսյանը, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Վ. Ա. Հակոբյանը, Ք. Ժ. Յախշյանը, Տ. Կ. Գևորգյանը, Տ. Հ. Ղանալանյանը և ուրիշներ:

Շավարշ Ազատյանի ատենախոսությունը նվիրված է Հայ եկեղեցու գաղափարական և դավանաբանական պայքարի կարևոր զենք հանդիսացող V-VIII դարերի հայ սրբախոսական գրականության պատմագիտական արժեքի ուսումնասիրմանը:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել և փորձել պատմաաստվածաբանական համակարգված մոտեցմամբ տեսական ու համեմատական վերլուծության ենթարկել ուսումնասիրվող ժամանակահատվածի սրբախոսական գրականության աշխարհընկալման պատմագիտական կարևորությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից: Ընդհանուր ծավալը կազմում է 209 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված են թեմայի կարևորությունը, դրա ժամանակագրական շրջանակները, առաջադրված խնդիրները, ինչպես նաև թեմային առնչվող գրականության տեսությունը: Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ սրբախոսական երկերի ուսումնասիրությունը պահանջում է տարբեր գրավոր, բանավոր ու հնագիտական աղբյուրների տեղեկությունների համալիր և ընդգրկուն քննություն:

Ատենախոսության մեջ առաջին անգամ համապարփակ պատմագիտական հետազոտության են ենթարկվել վաղմիջնադարյան հայ սրբախոսական գրականության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված երկերը:

Ատենախոսության առաջին՝ **«V-VI դդ. հայ սրբախոսական երկերի բնութագրական կողմերը»** խորագրով գլխում հեղինակը ներկայացրել է հայ սրբախոսական գրականության վարքերի և վկայաբանությունների կառուցվածքային, բովանդակային առանձնահատկությունները, դրանց ընդհանրությունները, տարբերությունները և սրբախոսական հերոսների ու սրբերի կերտման աստիճանական կերպարանափոխությունները:

Հեղինակն ընդգծում է, որ հայ սրբախոսական երկերը՝ հունական և ասորական գրականության ազդեցությունը կրելով հանդերձ, հանդես են բերում ինքնատիպ հատկանիշներ, որոնք բխում են հայ ժողովրդի մշակութային, հասարակական և քաղաքական կյանքի առանձնահատուկ պայմաններից:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «**Հայաստանի և հարակից երկրների I-III դդ. պատմության արտացոլումը վաղ շրջանի սրբախոսական գրականության էջերում**», նվիրված է Եդեսիայի Աբգար թագավորի, Ոսկյան (Խոիվս) սրբերի սրբախոսական և Սուքիասյանների վկայաբանական զրույցների քննությանն ու դրանցում առկա բազմաբնույթ տեղեկությունների վերլուծությանը՝ Հայաստանի, Եդեսիայի, Ադիաբենեի, Իրանի և ալանական ցեղերի քաղաքական, ռազմական, տնտեսական պատմության ընդհանուր համատեքստում: Այս գլխի շրջանակներում առանձին ենթագլուխ է նվիրված նաև վաղ սրբախոսական երկերում հանդիպող խորհրդանշաններին:

Ատենախոսության երրորդ՝ «**Պարսկական և արաբական տիրապետության շրջանում ստեղծված սրբախոսական երկերը և դրանց պատմագիտական արժեքը**» վերնագիրը կրող

գլխում Շ. Ազատյանը հաջողությամբ վեր է հանել սրբախոսական նոր երկերի օրինաչափությունները և դրանցում տեղ գտած կարևոր փոփոխությունները: Նրա հետազոտական հետաքրքրությունների կիզակետում են հայտնվել այդ շրջանում ստեղծված Շուշանիկի, Հիզտբուզիտի (Մախոշի), Դավիթ Դվինեցու վկայաբանությունները, որոնք կարևոր նշանակություն են ունեցել օտար տիրակալների դեմ պայքարում:

Իր ընդհանրացումները հեղինակն ի մի է բերել Եզրակացություններում:

Նշենք, որ ատենախոսության գլխավոր նորույթն այն է, որ հեղինակը հարուստ փաստագրական նյութի օգտագործմամբ կարողացել է վեր հանել և համակողմանի քննական վերլուծության ենթարկել վաղմիջնադարյան սրբախոսական գրականության պատմագիտական արժեքը, դրա ազդեցության միտումները, գործոնները և դրսևորումները բնութագրող ընդհանրական և մասնավոր օրինաչափությունները: Հեղինակն ընդլայնել ու խորացրել է հարցի ուսումնասիրումը նոր ժամանակաշրջանի խնդիրների հաշվառմամբ և համեմատական մեթոդաբանությամբ ստեղծել մի աշխատանք, որը հնարավոր է դարձրել ուրվագծել հայ սրբախոսական գրականության հարացույցը:

Անկասկած, կատարվել է դրական ու գնահատելի աշխատանք: Դրանով հանդերձ, ատենախոսությունում նկատելի են նաև բացթողումներ, վրիպումներ, որոնցից մի քանիսի վրա ենք հրավիրում ատենախոսի ուշադրությունը:

1. Ատենախոսության վերնագիրը լիովին չի արտացոլում աշխատանքի բովանդակությունը, քանի որ հեղինակը նշված ժամանակաշրջանի ոչ բոլոր սրբախոսական երկերն է քննության ենթարկել՝ կանգ առնելով գլխավորապես քիչ ուսումնասիրված երկերի վրա, մինչդեռ ցանկալի կլիներ, որ վերլուծվեին նաև Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյանց կույսերի վկայաբանությունները:
2. Ցանկալի և տրամաբանական կլիներ, որ հեղինակը ներկայացներ V-VIII դարերի հայ սրբախոսական երկերի ընդհանուր ցանկը և փորձեր դրանք դասակարգել՝ ըստ տիպի կամ ժամանակի:

3. Միասնական սկզբունքով չի կատարվել աշխատանքի բաժանումը՝ ըստ գլուխների, մի դեպքում բաժանումը ժամանակագրական է, մյուս դեպքում՝ թեմատիկ:
4. Արդարացի չէ IV-V դարերի հայ հեղինակներին սրբերի ընտրության հարցում ազգային և սեռական խտրականություն կիրառելու մեջ մեղադրելը (էջ 23-25), նաև անհիմն ու ժամանակավրեպ է այդ հարցը կանանց իրավունքների և ազատությունների հետ կապելը:
5. Էջ 47-ում հեղինակը հակված է ընդունելու որոշ հեղինակների այն կարծիքը, որ իրականում տեղի է ունեցել Աբգար արքայի ժամանակային տեղափոխություն և քրիստոնեություն ընդունած Աբգար VIII-ը տեղափոխվել է I դար և ներկայացվել Աբգար V: Սակայն պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ քրիստոնեության ընդունումը Եդեսիայում տեղի է ունեցել ոչ թե միանգամից, այլ երկու անգամ, նախ՝ 34 թ. Աբգար V-ի, ապա՝ 206 թ. Աբգար IX-ի (179-214) օրոք: Բանն այն է, որ Աբգար V-ի մահվանից հետո հեթանոսությունը նորից վերականգնվել էր և միայն Աբգար IX-ի օրոք է քրիստոնեությունը կրկին ամրապնդվել Եդեսիայում:
6. Բավականաչափ հիմնավոր չեն Շավարշ Ազատյանի ներքոհիշյալ մոտեցումները.

ա/ Զարեհավանի եպիսկոպոսությունը կապում է Ծաղկոտն գավառի հետ (էջ 53-54): Չպետք է մոռանալ, որ կային նաև Զարեհավան անունով այլ քաղաքներ:

բ/ Հիզտբուզիտի վկայաբանության հեղինակի, գրության ժամանակի և տեղի մասին ենթադրությունները (էջ 97-106): Անհասկանալի է, թե ինչից է հեղինակը կռահել, որ Դավիթ Դվնեցու աճյունը հուղարկավորողներն են եղել նրա վկայաբանության պատվիրատուները (էջ 108):

գ/ Սյունիք աշխարհը Հայք մարզպանության կազմից հանելու ժամանակի մասին ենթադրությունը (էջ 123-124):

Այս ամենով հանդերձ, ամբիոնը գտնում է, որ Շավարշ Ազատյանն ընդհանուր առմամբ կատարել է լուրջ և գնահատելի աշխատանք, որն ունի գիտագործնական ու ճանաչողական որոշակի արժեք և հարստացնում է հիմնահարցի պատմագրությունը:

Որոշեցին -ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Շավարշ Խաչիկի Ազատյանի՝ **«V-VIII դարերի հայ սրբախոսական գրականության պատմագիտական արժեքը»** վերնագրով ատենախոսությունը հաջողված, որոշակի պատմագիտական արժեք ունեցող ուսումնասիրություն է, որն օգնում է ամբողջական պատկերացում կազմել V-VIII դարերի հայ սրբախոսական գրականության ձևավորման և զարգացման օրինաչափությունների մասին, շրջանառության մեջ է մտցնում նոր տեղեկություններ վաղմիջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային, քաղաքական, հասարակական կյանքի, ինչպես նաև ներեկեղեցական մի շարք խնդիրների վերաբերյալ:

բ) Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և հեղինակն էլ արժանի է իր հայցած **Է.00.05 «պատմագրություն, աղբյուրագիտություն»** մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Պ.Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ
Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

06.12.2021